Հիսուսը խնդրեց մեզ կիսվել ավետարանով

Հարություն առնելուց հետո Հիսուսն այցելեց Իր Առաքյալներին: Նա տվեց նրանց ձուկ և հաց:

Հիսուսը հարցրեց Պետրոսին. «Սիրո՞ւմ ես ինձ»:

Պետրոսն ասաց՝ այո: Ապա Հիսուսն ասաց . «Արածեցրո՛ւ իմ գառներին»:

Հիսուսը ևս երկու անգամ հարցրեց Պետրոսին. «Սիրո՞ւմ ես ինձ»:

Պետրոսը երկու անգամն էլ ասաց՝ այո: Հիսուսն էլ երկու անգամ ասաց. «Արածեցրո՛ւ իմ ոչխարներին»:

Պետրոսը հասկացավ, որ Հիսուսը խնդրում էր նրան կիսվել ավետարանով: Հիսուսը մեր Հովիվն է, և մենք Նրա ոչխարներն ենք:

Մենք ցույց ենք տալիս մեր սերը Հիսուսի հանդեպ՝ օգնելով ուրիշներին սովորել Նրա մասին և հետևել Նրան: ●

Այս պատմությունը կարող եք կարդալ Հովհաննես 21.15-17 հատվածներում:

Հեռացրեք այս էջը և ծալեք այն կիսով չափ: Ապա բարձր պահեք նկարը՝ մինչ կպատմեք պատմությունը: